


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ**



ԿԱՐԳ

**ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ
ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՐԱԿԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ, ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ
ԳՈՐԾԻՔՆԵՐԸ**

ԵՐԵՎԱՆ 2022

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱՎԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ
ԱՐՁ. № 3, ԿԱՅԱՑԱԾ 20.06.2022 Թ.
ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
 ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ԿԱՐԳ

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ, ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության **ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի (այսուհետ՝ Ակադեմիա)** «Ամբիոնների վարիչների ընտրության կարգ»-ի և «Ամբիոնների գործունեության կանոնակարգ»-ի հիմնադրույթներին համապատասխան «Դասալսումների կազմակերպման, դասավանդման որակի գնահատման ընթացակարգը, մեխանիզմները և գործիքները» Կարգը:
2. Սույն կարգի իրավական հիմքերն են՝ ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 29-ի «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի կանոնադրությունը հաստատելու մասին» No1055-Ն որոշումը, ՀՀ կառավարության 2006 թ. ապրիլի 27-ի N 606-Ն որոշմամբ հաստատված «ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի կանոնագիրքը»:
3. Ակադեմիայի ամբիոններն (Ամբիոն) ուսումնական և գիտական աշխատանքը կազմակերպող հիմնական կառուցվածքային

ստորաբաժանումներ են, որոնք միավորում են մասնագիտական ընդհանրություն ունեցող գիտամանկավարժական կազմը, կազմակերպում և իրականացնում են ուսումնական գործընթացը, ուսումնամեթոդական, գիտամեթոդական ու կազմակերպչական աշխատանքները, բարձրորակ մասնագետների վերապատրաստումն ու որակավորման բարձրացման գործընթացները:

4. Ամբիոնը գործում է Ակադեմիայի կանոնադրությանը և ամբիոնի կանոնակարգին համապատասխան:
5. Ամբիոնի ընթացիկ աշխատանքները ղեկավարում է Ամբիոնի վարիչը:
6. Ամբիոնը կազմված է պրոֆեսորներից, դոցենտներից, դասախոսներից և մեթոդիստներից:
7. Ամբիոնի վարիչի պարտադիր պարտականությունների մեջ է մտնում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի դասալուծումները և դրանց քննարկման կազմակերպումն ու գնահատումը:

II. ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Դասալսումների նպատակը դասավանդման գործընթացի արդյունավետության որոշումն ու բարելավումն է:
2. Ամբոնի վարիչն իրականացնում է ամբիոնի դասախոսների դասալսումներ՝ ըստ ամբիոնի նիստում հաստատված ժամանակացույցի:
3. Դասալսումները կարող են կրել պլանային և ոչ պլանային բնույթ:
4. Դասալսումներն ունեն տարբեր նպատակներ՝
 - սկսնակ դասախոսներին մեթոդական օգնություն ցուցաբերելու,
 - առաջատար դասախոսների լավագույն փորձն ուսումնասիրելու և տարածելու,
 - դասախոսական կազմի դասավանդման որակի վերահսկման և այլ նպատակներով:
5. Դասալսումներն իրականացվում են ըստ «Կարծիք դասալսման վերաբերյալ» ձևաթղթի (**Հավելված 1**):
6. Յուրաքանչյուր դասալսում ամբիոնի վարիչի կողմից կատարված եզրակացությամբ, դիտողություններով և առաջարկներով գրանցվում է **Հավելված 1**-ում:
7. Ամբիոնի դասախոսների դասալսումների արդյունքները

քննարկվում են ամբիոնի նիստերի ժամանակ:

8. Քննարկման արդյունքները համապատասխանաբար արձանագրվում և գնահատվում են դասախոսի մասնագիտական, մանկավարժական և մեթոդական պատրաստվածության աստիճանը, կազմակերպչական, «սովորող-դասախոս» հարաբերությունների ձևավորման ունակությունները, դասը կազմակերպելու և վարելու ժամանակակից մեթոդների կիրառումը և այլն:
9. Տարեկան դասալսումների արդյունքում կազմվում է վերլուծական հաշվետվություն:
10. Ամբիոնների դասախոսների դասալսումների քննարկման և գնահատման արդյունքները հաշվի են առնվում պրոֆեսորադասախոսական անձնակազմի մրցույթի կազմակերպման, նաև պայմանագրի կնքման ժամանակ:
11. Դասալսմանը կարող է մասնակցել նաև գիտական և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը, ուսումնական բաժնի պետը:

III. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Նշանակությունը և կիրառման ոլորտը.

1. Դասավանդման որակի գնահատումը գործընթաց է, որն անհրաժեշտ է դասավանդողի մասնագիտական և մանկավարժական մակարդակն ու դասավանդման փորձը հաստատելու համար:
2. Դասավանդման որակի գնահատումն Ակադեմիայի գործունեության գնահատման չափանիշներից մեկն է:
3. Դասավանդման որակի գնահատումն, ըստ իր բովանդակության և ձևերի, ճկուն և բազմակողմանի ընթացակարգ է: Այն թույլ է տալիս անընդհատ հետևել դասախոսական կազմի դասավանդման որակական ցուցանիշներին և ապահովել դրանց զարգացումը:
4. Դասավանդման որակի գնահատման հիմնական սկզբունքներն են՝
 - համակարգայնությունը,
 - պարբերականությունը,
 - ուղղվածությունը դեպի կատարելագործում:
5. Դասավանդման որակի պարբերական գնահատումը թույլ է տալիս դասավանդողին հասկանալ, թե որքանով է նա լիարժեք դասավանդում, և բացահայտել դասավանդման

գործընթացի թույլ կողմերը, որոնք ենթակա են ուղղման և բարելավման:

Նպատակը և խնդիրները.

1. Դասավանդման որակի գնահատման ռազմավարական նպատակն է՝ կրթական գործունեության որակի ապահովումը և դասախոսական կազմի հնարավորությունների զարգացումը, առաջավոր փորձի փոխանակումը:
2. Դասավանդման որակի գնահատման խնդիրներն են՝
 - դասախոսական կազմի գործունեության որակի մշտադիտարկումը,
 - դասախոսական կազմի մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատումը,
 - գնահատման հիման վրա դասախոսական կազմի բարձր մասնագիտական գիտելիքի և որակավորման անընդհատ բարձրացման խթանումը,
 - շահակիցների հետ կայուն հետադարձ կապի հաստատում, նրանց կարիքների վերհանման, պահանջների ուսումնասիրության և վերլուծության իրականացում:

Գնահատման օբյեկտները և սուբյեկտները.

1. Դասավանդման որակի գնահատման հիմնական օբյեկտներն

են՝

- դասավանդման գործընթացը,
- դասավանդման մոտեցումները և մեթոդները,
- դասախոսի մասնագիտական և մանկավարժական ունակությունները,
- սովորողներին դասագործընթացին ներգրավելու կարողությունը և այլն:

2. Դասավանդման որակի գնահատման սուբյեկտը սովորողներն են:

3. Յուրաքանչյուր առարկայի դասավանդումը գնահատվում է տվյալ մասնագիտությամբ սովորողների կողմից: Դասավանդման որակի գնահատումը սովորողների կողմից բաժանվում է 2 փուլի՝

- դասախոսի մասնագիտական ունակությունների գնահատում, որը կատարվում է սովորողների հարցման կանոնակարգի համաձայն (Հարցման արդյունքները համարվում է որպես փակ տեղեկույթ),
- դասալսումներն իրականացվում են ամբոնի վարիչի կողմից, ինչը նպատակ է հետապնդում քննարկումների միջոցով բարելավել դասավանդման գործընթացը, դասավանդման մոտեցումներն ու մեթոդները, ինչպես նաև առաջավոր փորձի փոխանակումը:

IV. ԴԱՍԱՎԱՆՊՄԱՆ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

1. Դասավանդման որակի գնահատման ընթացակարգերը հիմնված են սոցիոլոգիական հարցումների (սովորողների անկետավորում) և այլ մեթոդների վրա:
2. Դասավանդման որակի գնահատման հիմնական ձևերն են՝
 - հարցումները,
 - անկետավորումը,
 - փաստաթղթերի ուսումնասիրությունը,
 - վերլուծությունը,
 - մշտադիտարկումը:
3. Դասավանդման որակի գնահատման մեթոդները գնահատման համակարգի կարևոր տարրերից են: Գնահատման նպատակներից կախված՝ դրանք կատարվում են հետևյալ մեթոդներով՝
 - գնահատման համար տեղեկատվության հավաքագրման (հարցումներ, անկետավորում, փաստաթղթերի վերլուծություն),
 - տեղեկատվության մշակման և գնահատման (քանակական և որակական),
 - գնահատման արդյունքների ներկայացման և հավաքագրման (դիագրամներ, անալիտիկ նյութեր, լրացված հարցման թերթիկներ և այլն):

V. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

1. Դասավանդման որակի գնահատման գործիքներն են՝
 - դասավանդման թերթիկ,
 - հարցման թերթիկներ:
2. Գնահատման պարբերականությունը. դասավանդման որակի գնահատումն Ակադեմիայում իրականացվում է յուրաքանչյուր ուսումնական տարի՝ նախօրոք հաստատված պլանի համաձայն:
3. Ընթացակարգի իրականացման համար պատասխանատու են ամբիոնի վարիչները, ուսումնական բաժինը, կրթության որակի ապահովման պատասխանատուն:

VI. ԱՄԲԻՈՆԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

4. Ամբիոնի նիստերում դասախոսումների քննարկման արձանագրված արդյունքները և որոշումները ներկայացնել ֆակուլտետի խորհրդի նիստերին:

ԿԱՐԾԻՔ
դասալսման վերաբերյալ

- 1. Ամիս, ամսաթիվ _____
- 2. Լսարան _____ ժամը _____
- 3. Արտակարգ իրավիճակների և ճգնաժամային կառավարման ֆակուլտետ
- 4. Ամբիոն _____
- 5. Մասնագիտություն _____
- 6. Կուրս _____ 7. Խումբ _____
- 8. Առարկա _____
- 9. Թեմա _____
- 10. Պարապմունքի ձևը _____
- 11. Ուսանողների թիվն ըստ մատյանի _____
- 12. Ներկա ուսանողների թիվը _____
- 13. Պարապմունքի ընթացքը _____

(ներկայացման ձևը, ցուցադրական նյութերի առկայությունը, ուսանողների

մասնակցության ակտիվությունը, գրառումները, դասախոսական նյութի առկայությունը և այլն)

14. Կարծիք դասալսման վերաբերյալ _____

15. Ծրագրի և մեթոդական ձեռնարկի առկայությունը, հրատարակման տարեթիվը՝ _____

16. Եզրակացություն _____

17. Առաջարկություններ _____

18. Դասավանդողներ՝ _____

(ամբիոնը, գիտական ասփիճանը, կոչումը, անուն, ազգանուն, ստորագրություն)

1.
2.
3.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ակադեմիայում դասալսումների կազմակերպման, դասավանդման որակի գնահատման ընթացակարգը, մեխանիզմները և գործիքները կարգ.....	3
I. Ընդհանուր դրույթներ.....	3
II. Դասալսումների կազմակերպումը.....	5
III. Դասավանդման որակի գնահատման ընթացակարգը	7
IV. Դասավանդման որակի գնահատման մեխանիզմները	10
V. Գնահատման գործիքները	11
VI. Ամբիոնի դասախոսների դասալսումների արդյունքների գրանցումը.....	11
Հավելված 1.....	12

